ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (IX—XIII ԴԴ.)

ՌԻՄԱ ԲՈՅԱՋՅԱՆ

Հայկական ճարտարապետական կոթողները, որոնց մի մասն է միայն հասել մեզ, իրենց վեհությամբ, գեղեցկությամբ և հարուստ լուծումներով այսօր էլ հիացմունք են պատճառում։ Հայկական ճարտարապետությունը իր նշանակությամբ վաղուց դուրս է եկել ազգային շրջանակներից և միջազգային ճանաչում ստացել։ Եվրոպացի մասնագետների կարծիքով, այն իր ազդեցությունն է թողել մի շարք երկրների ճարտարապետական արվեստի զարգացման վրա[1]։

IX—XIII դդ. արգասավոր էին հայկական մշակույթի բոլոր բնագավառների, այդ թվում նաև ճարտարապետության զարգացման համար։ Նշված դարերի հայ պատմիչների, ինչպես նաև վիմագիր արձանագրությունների հավաստի հաղորդումներից տեղեկանում ենք, որ հնամենի մեր կոթողների կառուցման գործում, տղամարդկանց կողքին, նկատելի վաստակ են ունեցել նաև հայ կանայք։ Պահպանված տեղեկություններից աներկբա երևում է, որ մանավանդ նշանակալից է եղել նրանց մասնակցությունը պաշտամունքային կառույցների ստեղծմանը։ Հայ իշխանուհիներն ու թագուհիները ոչ միայն հսկայական միջոցներ են տրամադրել և կառուցել շքեղ վանքեր ու եկեղեցիներ, այլև նյութական հնարավորություն են ստեղծել դրանց հետագա գործունեության համար։ Միջնադարյան պատմիչները բազում փաստերով վկայում են, որ հայ կանայք իրենց միջոցներով գնել են կամ սեփական-ժառանգական կալվածքներից վանքերին են նվիրել բազմաթիվ գյուղեր՝ իրենց շրջակա արոտավայրերով, արտերով, այգիներով, լեռներով ու ջրերով։ Նրանք եկեղեցիներին են նվիրել նաև թանկարժեք զարդեր, ոսկյա ու արծաթյա անոթներ, ջահեր, գորգեր, ծածկոցներ ու վարագույրներ[2]։

Միայն քրիստոնեական մոլեռանդությունը և հայրենասիրական ձգտումը չէին, որ հայ կանանց մղել են կառուցելու շքեղ և փառահեղ եկեղեցիներ ու վանքեր. այս գործում, անկասկած, որոշ դեր են կատարել նաև կանացի փա-

---

1 «История СССР», т. 1, М., 1939, стр. 160.

2 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 174, 218—219, 229, 230, 259—260, 291—293, 321, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 84—85, 89, 215—216, «Դիվան հայ վիմագրության», պ. II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 51, 66, պ. III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 56, 75, 76, 77, 79, 86, 148, 223, Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 187, 190, Նույնի՝ Հաղբատ, Իրեան, 1963, էջ 171, 174, 178։

ռասիրությունը, ապագա սերունդների հիշողության մեջ անմոռաց մնալու միտումը։

IX—XIII դդ. մատենագիրների ստեղծագործություններում, ինչպես նաև կառուցող վարպետների թողած արձանագրություններում, երախտագիտությամբ հիշատակված են այն կանանց անունները, որոնք իրենց հայրենանվեր գործերով սատարել են ճարտարապետական-շինարարական արվեստի զարգացմանը։ Ստեփաննոս Օրբելյանը, օրինակ, թվարկում է մի շարք իշխանուհիների ու թագուհիների, որոնց միջոցներով կամ օժանդակությամբ Սյունիքում բազմաթիվ վանքեր են կառուցվել։ Սյունյաց աշխարհում նման առաջին շինությունը Սյունի նշանավոր եկեղեցին է, որ կառուցել է տվել Սյունյաց տիկին Վարազդուխտը՝ հավանաբար VI դ. առաջին կեսին։ Պատմագիրը Սյունյաց աշխարհի նշանավոր եկեղեցիների ու վանքերի շարակարգության մեջ, որը տրված է ըստ կարևորության, Տաթևի և Թանահատի վանքից հետո հիշատակված երրորդ վանքի մասին գրում է. «...Սիւնի վանք, որոյ եկեղեցին չքնաղ և նորակերտ ձևով կանգնեալ զմբէթայարկ խորան երկնանման, ի մեծ բարեպաշտուհւոյն Վարազդխտոյ՝ Սիւնեաց տիկնոջէ, յառաջ քան զհայ թուականն, յանուն սրբոյ Լուսաւորչին»[3]։

Պատմագրի այն խոսքերը, թե եկեղեցին կառուցվել է «յառաջ քան զհայ թուականն», չեն վերաբերում ներկայումս կանգուն շենքին։ Վերջինս, որ կենտրոնազմբեթ եկեղեցի է, ըստ մասնագետների, հիմնվել է VI դ. վերջերին։ Ժողովրդի մեջ պահպանված հիշողության հիման վրա Ս. Օրբելյանը պարզապես կամեցել է շեշտել կառույցի հիմնադրման հնությունը։ Արձանագրությունների մեջ տիկին Վարազդուխտ անունը չի պահպանվել[4]։

Ըստ ավանդության, ժամանակին Սևանա կղզում եղել է հեթանոսական մեհյան, որը 305 թ. կործանել է տվել Գրիգոր Լուսավորիչը և տեղում կանգնեցրել փայտակերտ մի խաչ։ Հայոց իշխանաց իշխան, հետագայում թագավոր Աշոտ Բագրատունու դուստր, Սյունյաց Վասակ Գաբուռ իշխանի կին իշխանուհի Մարիամը գնում է Սևանա կղզի և 874 թ. այնտեղ կառուցում ս. Առաքելոց և ս. Աստվածածին եկեղեցիները։ Այդ առթիվ Ս. Օրբելյանի մոտ կարդում ենք. «մեծ թագուհին Մարիամ՝ ամուսին Վասակայ Սիւնւոյ, գայ առ սուրբն Մաշտոց. և բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ առաքելոց, և զմիւսն, յանուն տիրուհւոյ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց յ323 թուականին Հայոց»[5]։

Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին մասնակցում է վանքի բացման արարողությանը՝ նավակատիսին, և վանքին է նվիրում Սևանի ավազանի մի քանի գյուղեր[6]։

Սյունյաց Վասակ իշխանը մահանում է անժամանակ, և ամուսնու հիշատակը հավերժացնելու նպատակով իշխանուհի Մարիամը Սոդք գավառի Շողվագա գյուղի մոտ կառուցում է ս. Պետրոս եկեղեցին։ Նա եկեղեցուն է նվի-

---

3 Ստեփաննոս Օրբելյան, էջ 338։
4 «Դիվան», պ. II, էջ 85—93։
5 Ստեփաննոս Օրբելյան, էջ 173, 174։
6 Նույն տեղում, էջ 174։

ռում Շողվագա (որ գնել էր արաբներից) և Գներ գյուղերը։ Ս. Օրբելյանը, որ անձամբ եղել է այդ եկեղեցում և կարդացել տիկին Մարիամի թողած արձանագրությունը, գրում է. «Դարձեալ՝ սոյն Մարիամ շինէ զմեծապայծառ եկեղեցին ի Շողուագայ յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի. և կարգէ ի նմա կրօնաւորանոց, դասս բազմահոյլ քահանայից՝ վասն հոգեաց տեառն իւրոյ Վասակայ՝ իշխանի Սիւնեաց»[7]։

Ցուսուֆի 909 թ. արշավանքի ժամանակ Սյունյաց իշխաններից շատերը, թշնամու հարձակումներից ահաբեկված, հեռանում են իրենց բնակավայրերից. հեռացողների թվումն էին նաև իշխանուհի Մարիամն ու նրա երկու որդիները՝ Սահակն ու Վասակը։ Նրանք նախ ամրանում են Սևանա կղզում, ապա, թշնամուց հետապնդվելով, այնտեղից անցնում են Գարդման և Արցախ։ Այնտեղ մահանում է իշխանուհի Մարիամը, որի դին տղաները զմռսում, պահում են, և իրենց նահանգը խաղաղվելուց հետո՝ տանում ու թաղում են Շոզվագա գյուղի եկեղեցու բակում. «...Ապա ի ժամ դարձին բերեալ շքեղագոյն պատուով զմայրն իւրեանց, և աշխարհաժողով հանդիսիւ եդին ի հանգըստի մերձ առ ձեռակերտ եկեղեցւոյն իւր ի Շողուագայ»[8]։

IX դ. վերջին քառորդին երկրաշարժից խարխլվել էր նույն դարի սկզբներին կառուցված Տաթևի ս. Գրիգոր եկեղեցին[9]։ Սյունյաց միտրոպոլ տեր Հովհաննեսը որոշում է կառուցել նոր, ավելի մեծ ու շքեղ մի տաճար՝ կաթուղիկե եկեղեցի, որը դառնալու էր նահանգի հոգևոր թեմի կենտրոնը։ Սակայն Սյունյաց մետրապոլությունը միջոցներ չուներ նման խոշոր կառույց ձեռնարկելու։ Իր մտահղացման մասին տեր Հովհաննեսը հայտնում է Սյունյաց գահերեց իշխան Աշոտին (վերոհիշյալ Վասակ իշխանի պապի եղբորորդուն), մյուս իշխաններին ու իշխանուհի Շուշանին, որոնք մեծ միջոցներ են տրամադրում, և տեր Հովհաննեսը 895 թ. սկսում է Տաթևի նշանավոր վանքի շինարարությունը։ Ս. Օրբելյանը գրում է. «ազգէ և զայս մեծի և գահերէց իշխանին Սիւնեաց Աշոտոյ... և ամուսնոյ նորա երանելի և մեծահաւատ տիկնոջն Շուշանայ, և միւս իշխանին որ ի Գեղամ գաւառի լինէր... որք մեծապէս խրախացեալ՝ աստուածային իմն տեսչութեամբ անդր փութապէս բերեալք լինէին... միաբան, միախորհուրդ ձեռն ի գործ արկանէին և ջանային փութապէս կատարել։ Բացեալ լինէին այնուհետև գանձարանք նոցա, և առատապէս ծախեալ ի գործօնեայս շինուածոյն... և աստուածային կամակցութեամբն սկիզբն առնեն շինուածոյն, և արկանեն հիմն յ344 թուականին Հայոց, ի թագաւորութեանն Սմբատայ Բագրատունւոյ խոստովանողի... յիշատակութեան Սիւնեաց Աշոտոյ՝ որդւոյ Փիլիպպէի, ի կաթողիկոսութեանն Հայոց Տեառն Գէորգեայ Գառնեցւոյ»[10]։

Նույնն է հաղորդում Պողոս—Պետրոս եկեղեցու պատին փորագրված արձանագրությունը, մի անգամ ևս հավաստելով այն իրողությունը, թե խնդրո առարկա հարցի շուրջը անվանի պատմիչի վկայությունների աղբյուրը հանդիսացել են կառույցների վրա պահպանված արձանագրությունները. «Ցամին

7 Նույն տեղում, էջ 174։
8 Նույն տեղում, էջ 190։
9 Նույն տեղում, էջ 314։
10 Նույն տեղում, էջ 223—224։

յորում թուականն Հայոց։ ՅԽԴ։ էր, եւ զատիկն ի նաւասարդի ի։դ։ Ես տէր Յովհաննէս... արարի սկիզբն շինուածոյ եկեղեցւոյս»[11]։

Տաթեւի վանքի կառուցումը տեւում է մեկ տասնամյակ։ Վեր է խոյանում մի հիասքանչ տաճար՝ 100 կանգուն (30 մ) բարձրությամբ, 48 կանգուն (14,5 մ) երկարությամբ և 24 կանգուն (ավելի քան 7 մ) լայնությամբ՝ իր օժանդակ հարմարություններով՝ գրչատուն, գործատներ, ամբարանոց և այլն[12]։

906 թ. հանդիսավոր պայմաններում տեղի է ունենում Տաթեւի վանքի գլխավոր՝ Պողոս-Պետրոս եկեղեցու բացումը։ Բացման արարողությանը մասնակցում են Հայոց թագավոր Սմբատ Բագրատունին, Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը, Գագիկ Արծրունին, հայ իշխաններ, բարձրաստիճան հոգևորականներ[13]։ Ի թիվս շատերի՝ եկեղեցու բացման առիթով նվիրատվություն է կատարում նաև Սյունյաց իշխանուհի Շուշանը. նա վանքին է նվիրում Ծածարդ և Քարատնիս գյուղերը։ Իսկ Սյունյաց Բաբգեն իշխանի դուստր Համասպրուհին նվիրում է Հալիս (Հալիձոր) գյուղը և Հալիս գետի ափին գտնվող այգին[14]։

895—904 թթ. տեր Հովհաննեսը, հավանաբար նույն անձանց օժանդակությամբ, կառուցում է նաև Տաթեւի վանքի նշանավոր գավազան-սյունը՝ 9 մ բարձրությամբ[15] գեղեցիկ և ճոճվող մի կոթող, որը կանգուն է մինչև օրս։ Վաստակաշատ Ս. Բարխուդարյանի կարծիքով, Պողոս—Պետրոս եկեղեցու վերաբերյալ արձանագրությանն առընթեր մյուս արձանագրությունը հենց այդ կոթողին է վերաբերում. «Հրամանաւ ածապահ տերանց եւ յաւժարութեանբ իմոց կրաւնաւորաց եւ ի նոյն տարւոջ ի յեւթներորդ ամսոյս յարաց կանկնեցաւ արձանս»[16]։

Ըստ Ս. Օրբելյանի՝ Վայոց ձորի ստորոտներում, Հրասեկա բերդի սահմաններում գտնվող Արաստամուխ գյուղի մոտ, վաղուց ի վեր բնակվում էր «խոտակեր ճգնավորների» մի մեծ բազմություն, որի հիմնական բնակատեղին Արաստամուխի մոտ եղած Խոտակերաց կամ Քարկոփ կոչվող եկեղեցին էր։ Այդ եկեղեցին արաբական արշավանքների ժամանակ քանդվել էր, և ճգնավորները ստիպված ապաստանում էին փոքրիկ մատուռների մեջ։

Իմանալով այդ մասին, Սյունյաց իշխան Աշոտը վերը հիշատակված տեր Հովհաննեսին հանձնարարում է վերակառուցել վանքը, որը և իրականացնում է։ Աշոտ իշխանի մահից հետո, IX դ. վերջերին երկրաշարժից քանդվում է նորակառույց այդ վանքը ևս։ Տեր Հովհաննեսը վանքի ավերման մասին տեղեկացնում է Աշոտ իշխանի կնոջը՝ իշխանուհի Շուշանին։ Տիկին Շուշանը, ամուսնու հիշատակը վառ պահելու նպատակով, 910 թ. վերակառուցում է վանքի օժանդակ շենքերը և կառուցում Մարիամ Աստվածածին եկեղեցին, որը, պատմիչի ասելով, նախորդից ավելի շքեղ էր։

Պահպանված տեղեկություններից երևում է, որ հիշյալ դարերում կառուցումների սատարման գործին հայ կանանցից ամենից ակնառու մասնակցություն ունեցողներից մեկը եղել է իշխանուհի Շուշանը։ Նրա միջոցներով

11 «Դիվան», պ. II, էջ 13։
12 Ստեփաննոս Օրբելյան, էջ 224։
13 Նույն տեղում, էջ 234։
14 Նույն տեղում, էջ 229—230, «Դիվան», պ. II, էջ 51։
15 Ստեփաննոս Օրբելյան, էջ 225, 313։
16 «Դիվան», պ. II, էջ 13։

է զարդարվել Խոտակերաց վանքը։ Շուշանի կառուցած ս. Աստվածածին եկեղեցու բացումը տեղի է ունենում մեծ հանդիսությամբ, որին հրավիրվում է մասնակցելու կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին։ Եկեղեցու պատի վրա իշխանուհին թողել է հետևյալ արձանագրությունը. «Նախ և առաջին իսկ լեալ էր վանքն Խոտակերաց և վասն զի աւերեալ էր կրօնաւորանոց ուխտս և քաւարանս... ապա տէրն իմ երանելին Աշոտ աշխատութեամբ շինեալ էր զսուրբ եկեղեցիքն... Եւ եղև զի հիմնաշարժ լինելով աւերեցան եկեղեցիքս և իմ տեառն իմոյ Աշոտի կենաց հաղորդ կամելով լինել, (առ ի) նորոգել զյիշատակ նորա փոխելոյն առ Քրիստոս, նոր շինեցի զսուրբ եկեղեցիս կրօնաւորանոց շինուածովք յանուն սրբուհւոյ և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին»[17]։

Արձանագրության շարունակության մեջ իշխանուհի Շուշանը գրում է, թե ինքը կառուցել է 5 եկեղեցի. «Ի հինգ եկեղեցիսդ յայդ զոր ես շինեցի մին եկեղեցիդ, որ է աստուածածինդ՝ տն իմոյ Աշոտի եւ յիմ անուն լիցի»[18]։ Այնուհետև Շուշանն արձանագրել է տվել, թե «այլ ևս ի չորեք եկեղեցիքդ եղիցին որդեկաց իմոց յարեւշատութիւն և... Գրեցաւ յիշատակարան կտակիս այս :ՃԾԹ: (910) թուականութեանս Հայոց...»[19]։

Հետագա դարերում Քարկոփի կամ Խոտակերաց վանքը վերակառուցվել է, համալրվել նոր կառույցներով։ Իշխանուհի Շուշանի կառուցած հինգ եկեղեցիներից պահպանվել է միայն մեկը, այն էլ կիսաքանդ վիճակում։ Խոսքը Մարիամ Աստվածածին եկեղեցու մասին է, որի վրա էլ, ինչպես նշեցինք, պահպանվել է բերված արձանագրությունը[20]։

Իբրև շինարար հայ մատենագրության մեջ իր անունն է թողել նաև Սյունյաց Սմբատ իշխանի կին, Վասպուրականի թագավորության հիմնադիր Գագիկ Արծրունու քույր իշխանուհի Սոփիան։ Սյունյաց Սմբատ իշխանի (Աշոտ իշխանի ավագ որդին էր, որ հաջորդել էր հորը), նրա կնոջ՝ իշխանուհի Սոփիայի, և եղբոր՝ Սահակի, հրամանով Սյունյաց եպիսկոպոս տեր Հակոբը 929 թ. Եղեգնաձորում կառուցում է շքեղ ու նկարազարդ մի եկեղեցի. «...ի թուականութեանն Հայոց 378... սկիզբն առնէ շինուածոյ հրամանաւ Սմբատայ իշխանի և Սոփիայ կնոջ նորա, և Սահակայ, եղբօր նորին։ Եւ կանգնէ ի նմա տուն Աստուծոյ ի քերածոյ վիմաց, և զանազան երանգօք զարդարէ զնա ի նկարս գեղեցիկս...»[21]։ Ցավոք, հեղինակը մանրամասն չի նշել կառուցված եկեղեցու տեղը և նրա անունը։

Իշխանուհի Սոփիայի նախաձեռնությամբ 936 թ. կառուցվում է նաև Գնդեվանքի եկեղեցին։ Ս. Օրբելյանի հայտնած տեղեկությամբ, իշխանուհի Սոփիան ուխտ է գնում Վայոց ձորում ապրող ճգնավորների մոտ, և նրան չափազանց դուր է գալիս Գնդեվանքի տեղը։ Տիկին Սոփիայի հրամանով հավաքվում են շնորհալի քարտաշներ ու այլ արհեստավորներ, և սկիզբ է առնում Գնդեվանքի շինարարությունը, որի ղեկավարումը իշխանուհին հանձ-

---

17 Ստեփաննոս Օրբելյան, էջ 236—237։

18 «Դիվան», պ. III, էջ 206 (ներդիրը)։

19 Նույն տեղում, Ստեփաննոս Օրբելյան, էջ 238։

20 Հ. Եղիազարյան, Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 29—32, «Դիվան», պ. III, էջ 205—206։

21 Ստեփաննոս Օրբելյան, էջ 258։

նարարում է տեր Հակոբին, իսկ նկարազարդման աշխատանքները՝ Եղիշե նկարչին։ Տիկին Սոփիան վանքին է նվիրում թանկարժեք սպասք և մոտակայքի երկու գյուղերը, և «Կանգնէ զտունն Աստուծոյ և նկարակերտ յօրինուածօք զարդարեն զառաստաղս և զորմունս նորա... Եւ երանելի տիկինն անուանէ զվանսն Գնդեվանք... Եւ այս լինէր ի թուականին Հայոց 385»[22]։ Տիկին Սոփիան Գնդեվանքի ձորում տնկել է տալիս մրգատու ծառեր։ Իշխանուհին Գնդեվանքի եկեղեցու պատին թողել է հետևյալ արձանագրությունը. «Ես Սոփիա տիկին՝ կին Սմբատայ աստուածապահ տեառն Սիւնեաց, և դուստր Գրիգոր Դերենկի, շինեցի զեկեղեցիս ի յիշատակ հոգւոյ իմոյ և յարևշատութիւն իշխանաց իշխանին Սմբատայ և որդեկաց մերոց, և զարդարեցի զսա մեծածախ սպասիւք, և ետու զերկու գիւղս ի ժառանգութիւն սմա...»։ Արձանագրությունը իշխանուհին ավարտում է հետևյալ թևավոր արտահայտությամբ. «մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա ի եդի ակն ի վերայ»[23]։ Սույն արձանագրության մի մասը մինչև օրս էլ պահպանվել է կիսականգուն եկեղեցու պատին[24]։ Պահպանվել է նաև Եղիշե նկարչի թողած արձանագրությունը. «:ՅԲ: (931) Թ[ուա]կ[ան]իս ես Ե/ղիշա ի:Զ: կա/րգիս առա/ջ արարրի, առ/աջնորդու/թեամբ Սար/գիս քահան/ա՛, որ կարդա/ք տր. ողորմ/է ասացէք»[25]։

Մինչ այդ Վայոց ձորում քիչ եկեղեցիներ չէին կառուցվել։ Հավանաբար, Գնդեվանքի եկեղեցին իր ճարտարապետական կառուցվածքով և ներքին ու արտաքին հարդարանքով ամենից պերճազարդն է եղել, որ և հիմք է տվել իշխանուհուն հայտնելու, թե «մատանի էր անակն Վայոց ձոր, շինեցի զսա ի եդի ակն ի վերայ»։

Հետագա դարերում վանքը վերակառուցվել է, պարսպապատվել, ավելացել են նոր համալիրներ[26], որոնց մեծ մասը դարերի ընթացքում տարբեր պատճառներով փուլ է եկել։

Ս. Օրբելյանն ակնածանքով է հիշատակում նաև Սյունիքի թագավորության հիմնադիր Սմբատ I-ի (987—998) կնոջը՝ «երանելի Շահանդուխտ»-ին։ Շահանդուխտ թագուհին 1000 թ. ավարտում է «գեղեցկայարմար և զվայելչադիտակ» Վաղուդիի[27] ս. Ստեփանոս եկեղեցու շինարարությունը, որի կառուցումը սկսվել էր դեռևս Սմբատի կենդանության օրոք։ Ըստ ավանդության, այդ եկեղեցու տեղում եղել էր հնում կառուցված ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը տարիների ընթացքում բնության տարերքից քանդվել էր։ Շահանդուխտ թագուհին նույն տեղում կառուցում է նոր եկեղեցի՝ օժանդակ հարմարություններով։ Նա թանկարժեք իրերով ու սպասքով զարդարել է տալիս եկեղեցին, պարսպապատում է վանքը, նրան է նվիրում Գոմեր ագարակը և բազմաթիվ անդաստաններ Վաղուդիում[28]։ Շահանդուխտի շինարարական գործունեության մասին ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան պատի

---

22 Նույն տեղում, էջ 261։

23 Նույն տեղում, էջ 261—262, «Դիվան», պ. III, էջ 13։

24 «Դիվան», պ. III, էջ 13։

25 Նույն տեղում, էջ 14։

26 Նույն տեղում, էջ 16։

27 Վաղուդիի վանքը գտնվում է Սիսիանի շրջանի Վաղուդի գյուղից 2 կմ հարավ։

28 Ստեփաննոս Օրբելյան, էջ 302։

վրա պահպանված արձանագրությունը հաղորդում է. «Շինեցաւ հրամանով թագաւորին Սնպատա ի ձեռն Շահանդխտո բարեպաշտ [թագուհոյ]»[29]։

Շինարարական-մեկենասական լայն գործունեություն էր ծավալել Աշոտ III թագավորի տիկինը՝ Խոսրովանույշը։ XII դ. պատմագիր Ս. Անեցու հաղորդած ստույգ տեղեկությունների համաձայն, X դ. 60—70-ական թվականներին նա Գուգարքի Նահանգի Տաշիրք գավառում մեկը մյուսի ետևից կառուցում է Սանահնի և Հաղբատի վանքերը[30]։ Ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը Սանահնում կանգնեցրել էր խաչ, որը պաշտամունքի առարկա էր վաղ քրիստոնեական շրջանից։ X դ. առաջին կեսին, Աբասի գահակալության տարիներին (929—953), Բյուզանդիայի Ռոմանոս կայսրը (920—944) իր կայսրության սահմաններից հեռացնում է հակաքաղկեդոնական հայ հոգևորականներին։ Սրանք գալիս են Հայաստան և կառուցում մի շարք եկեղեցիներ, որոնց թվում և Հոռոմոսի նշանավոր վանքը, Դպրեվանքն ու Սանահնի ս. Աստվածածին եկեղեցին[31]։ 966—972 թթ. Խոսրովանույշ թագուհու նախաձեռնությամբ, Սանահնի ս. Աստվածածին եկեղեցուց ոչ հեռու, կառուցվում է վանքի գլխավոր տաճարը՝ Ամենափրկիչ եկեղեցին։

Աշոտ III-ի որդի Սմբատ թագավորը, որը 979 թ. ուխտի է եկել Սանահին, հարկ է համարել նույն թվականին թողած արձանագրության մեջ հավերժացնել իր հոր և մոր շինարարական գործունեությունը. «...ես Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց, թոռն տիեզերակալ և մեծ թագաւորին Սմբատայ, որդւոյ թագաւորին Աշոտոյ Ողորմածն կոչեցելոյ, եկի ի տեսութիւն սբ ուխտիս Սանահնիս, զոր շինեալ էր թագաւորն Աշոտ և Խոսրովանոյշ թագուհին՝ հայրն և մայրն իմ, և տեսի զի Աստաշէն և թագաւորաշէն էր, վասն որոյ և սիրեցի, և սիրոյ նըշան արարեալ հաստատեցի զսա աթոռ եպիսկոպոսութեան, և սահմանեցի զվիճակ սբ Աստածնիս...»[32]։

1063 թ. Տաշիր-Զորագետի թագավոր Կյուրիկեի (1050—1090) կինը՝ Հրանուշ թագուհին (Դավիթ Անհողինի աղջիկը), Սանահնի վանքում կառուցում է նշխարատուն և ս. Գրիգոր եկեղեցին։ Այդ առթիվ ս. Գրիգոր եկեղեցու պատին արձանագրված է. «Ի ՇԺԲ թուին հայոց. ի հայրապետութեանն տեառն Դէոսկորոսի, ի թագաւորութեանն Կիւրիկէի եւ Սմբատայ, ես Հրանուշ թագուհի՝ դուստր Դաւթի արքայի, շինեցի զնշխարատունս եւ զեկեղեցիս, եւ ետու զնորաշէնքս ի Սանահինս վասն իմ մեղաց թողութեանն...»[33]։

1181 թ. կառուցվել է Ամենափրկիչ եկեղեցու ժամատունը, որի կառուցմանը մասնակցել են նաև Կյուրիկե II (1145—1170) թագավորի դուստրերը՝ Մարիամը, Բորինան, Ռուսուդանը և նրանց մոր՝ Թամարի, հորաքույր Ռուսուդանը։ Սրանցից յուրաքանչյուրն իր հիշատակին կանգնեցնել է տվել գավթի կենտրոնական չորս սյուներից մեկը և թողել համապատասխան արձանագրություն։ Ահա այդ արձանագրությունները. «Ես Մարիամ Բագրատունի դուստր արքային Կիրիկի մեծաւ յուսով կանգնեցի զսիւնս զայս եւ ետու գիմ

29 «Դիվան», պ. II, էջ 100։

30 «Սամուէլի քահանայի Անեցւոյ հավաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 100։

31 Կիրակոս Գանձակեցի, էջ 84—85։

32 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 190։

33 Նույն տեղում, էջ 187։

հայրենի սբ նշանս մեծածախ պահարանով ի սբ Աստծինս, սկեան արծաթի, եւ տաւնացուցակ...»։ «Ես Բաւրինա, նոյն արքաի դուստր, քոյր Մարիամու կանգնեցի զսիւնս զայս եւ զիս յիշեցէք ի Քս»։ «Ես Ռուսուգան, նմին արքաի դուստր, քոյր Մարիամա, կանգնեցի զսիւնս՝ լինել ինձ սիւն լուսո ի կեանս յաւիտենից»։ «Ես Ռուսուգան, հաւրաքոր Թամարի, մայր Թագուհեացդ զսիւնս կանգնեցաք, զմեզ յիշեցէք ի Քս»[34]։ Հետագա դարերում Սանահնի վանքում կառուցվել են նոր համալիրներ[35]։

Խոսրովանույշ թագուհին, Սանահնի վանքից մի քանի կմ հեռավորության վրա, 976 թ. հիմնադրում է Հաղբատի վանքի ս. Նշան եկեղեցին, որի կառուցումն ավարտվում է 991 թ. Խոսրովանույշի որդիներ Կյուրիկեի (Գուրգեն) և Սմբատի կողմից[36]։

XIII դ. սկզբին կառուցվել է Խաթունաշեն ս. Աստվածածին եկեղեցին։ Վերջինիս պատի վրա պահպանված արձանագրության մեջ նշված է, թե եկեղեցին կառուցվել է Խաչենի Դեսումյանց Հասան իշխանի դուստր Խաթունի միջոցներով. «Կամաւն Ա(ստուծո)յ շինեցաւ ս(ուր)բ եկեղեցիս արդեամք Խաթունին [դստե]ր Հասանայ, յազգէ Դեսոմեանց որ բերաւ ի Խաչենոյ յամուսնութի(ւն) Զաքարիա, որ էր տէր Գագա եւ Տաւշո, Գարդմանա եւ Տէրունականին և այլոց գաւառաց...»[37]։

1185 թ. Կյուրիկե II թագավորի դուստր Մարիամը Հաղբատում կառուցում է Կյուրիկյանների տոհմական տապանատունը[38]։ Մարիամը 1200 և 1212 թթ. իր քույր Ռուսուգանի հետ վերակառուցման աշխատանքներ է կատարել գլխավոր գավթում։ Այդ առթիվ պահպանվել են 1200 և 1212 թթ. գրված նույնաբովանդակ երկու արձանագրություն։ Բերում ենք 1212 թ. արձանագրությունը. «Թվիս ՈԿԱ: ...ես՝ Մարիամ, դուստր Կիւրիկէ արքաի... [եւ] քոյր իմ Ռուսուգան զխորանս շինեցաք եւ զգաւիթս... մեծածախ պահարանաւ եւ զոսկէմած աւետարանս ի ս(ուր)բ Նշ[անս]... նշանաւ ետու...»[39]։ Մարիամն է կառուցել նաև Քոբայրի վանքի գլխավոր եկեղեցին։

XIII դ. առաջին կեսին Հաղբատում կառուցվել է գրատուն և սեղանատուն, իսկ 1208—1210 թվականների ընթացքում՝ մեծ ժամատուն[40]։ 1253 թ. կառուցվել է Համազասպի ժամատունը, որի կառուցմանը դրամական օգնություն են տվել Շնահավոր Տփխեցին (Տփղիսեցին), նրա կին Ռուսուգանը և նրանց որդիները[41]։

X—XI դդ. պատմագիր Ս. Տարոնեցին (Ասողիկ) վկայում է, որ 989 թ. Սմբատ II-ը (977—990) ձեռնարկում է Անի քաղաքի մեծ պարսպի[42], ապա նաև Մայր եկեղեցու շինությունը, որի կառուցումը հանձնարարում է մեծատաղանդ ճարտարապետ Տրդատին, որը մինչև այդ կառուցել էր Արգինայի

---

34 Նույն տեղում, էջ 114, 115։

35 Նույն տեղում, էջ 31—38։

36 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 10—13։

37 Նույն տեղում, էջ 220։

38 Նույն տեղում, էջ 157—158։

39 Նույն տեղում, էջ 175—176։

40 Նույն տեղում, էջ 32, 77։

41 Նույն տեղում, էջ 168։

42 Անի քաղաքի փոքր պարիսպը կառուցել էր Աշոտ III-ը։ Տե՛ս «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1860, էջ 122։

կաթողիկոսարանի եկեղեցին. «Արկանէ հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անւոյ ի ձեռն ճարտարապետին Տրդատայ, որ զկաթողիկոսարանին եկեղեցին շինեաց յԱրգինա»[43]։ Սմբատ II-ը մահանում է վաղաժամ՝ Անիի կաթողիկե եկեղեցու կառույցը իր ավարտին չհասցրած։ Այն շարունակում է Գագիկ II-ի կինը՝ Սյունյաց Վասակ թագավորի դուստր[44] Կատրանիդե թագուհին։ Այդ մասին վկայություն է պահպանվել հայ մի քանի պատմագիրների գործերում։ Կ. Գանձակեցու մոտ, օրինակ, կարդում ենք. «Եւ կին նորա (խոսքը Գագիկ II-ի մասին է—Ռ. Բ.) Կատրամիտէ թագուհի աւարտեաց զկաթուղիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Սմբատ թագաւորն»[45]։ Ս. Օրբելյանը գրում է, թե «թագաւորն Գագիկ փեսայացեալ էր սմին Վասակայ թագաւորի. և էր թագուհին Կատրամիդէ դուստր սորա, որ և հանդիսանայր շինութեամբ երկնաձեմ առագաստին սրբոյ կաթողիկէին»[46]։ Ս. Օրբելյանի մոտ այդ տեղեկությանը հանդիպում ենք նաև այլ առիթով. «...զԿատրամիդէ կին Գագկայ թագաւորի՝ որդւոյ Աշոտոյ, որ և շինեաց զսխրատեսիլն և զհրաշաձև եկեղեցին ի յԱնի զմեծ կաթուղիկէն...»[47]։

1010—1011 թթ. ավարտվում է Անիի Մայր տաճարի կառուցումը[48], որը իր մասշտաբով և ճարտարապետական արժանիքներով մայրաքաղաքի գլխավոր զարդն էր։ Վեր է խոյանում գմբեթավոր, բարձր կամարներով, երկնանման խորանով մի հիասքանչ եկեղեցի։ Թագուհին այն զարդարում է ոսկե և արծաթե անոթներով, ոսկեթել նկարագործ բանվածքներով և լուսատու ջահերով։ Ասողիկը գրում է. «Այլ կին նորա (Գագիկ I-ի—Ռ. Բ.) Կատրամիդէ թագուհի բարեպաշտուհի եղեալ, որ էր դուստր Վասակայ Սիւնեաց իշխանի՝ շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք գմբէթաւորեալ խորան երկնանման, և զարդարեաց ի զարդ ծիրանեծաղիկ, ոսկեթել նկարագործ անկուածոց, արծաթեղէն և ոսկեղէն անօթոց ի բազմապայծառ լուսատու անօթոց վայելչութեամբ, որովք ջահանայր ըստ երկնային կամարին կաթուղիկէն սուրբ, որ ի քաղաքն Անւոյ»[49]։

Կատրանիդէ թագուհու կառուցած Մայր տաճարը Անիի ճարտարապետական այն հուշարձաններից է, որ կիսավեր վիճակում կանգուն է մինչև այսօր։

---

43 «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 187։

44 Ըստ Ս. Տարոնեցու և Ս. Օրբելյանի, Կատրանիդե թագուհին Սյունյաց Վասակ թագավորի դուստրն էր, ըստ Վարդան Բարձրաբերդցու՝ Սյունյաց Սահակ իշխանի, իսկ ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ վրաց Գեորգի թագավորի դուստրը (Ասողիկ, էջ 256, Ստեփաննոս Օրբելյան, էջ 300, Վարդան Բարձրաբերդցի, էջ 123։ Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 9)։ Այս տարակարծությունների ստույգ պատասխանը տալիս է կաթողիկե եկեղեցու պատին թագուհու թողած արձանագրությունը. «Ի : Ն : Ս : Թ։ Հայոց... ես Կատրանիդե Հայոց թագուհի, դուստր Վասակա Սիւնեաց թագաւորի... շինեցի զսուրբ կաթողիկէս, զոր էր հիմնադրեալ Մեծին Սմբատա» («Դիվան», պ. 1, Երևան, 1966, էջ 35)։

45 Կիրակոս Գանձակեցի, էջ 89։

46 Ստեփաննոս Օրբելյան, էջ 303։

47 Նույն տեղում, էջ 300։

48 Ա. Գ. Աբրահամյան, ժամանակագրական ճշտումներ («Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1976, էջ 152—162)։

49 Ասողիկ, էջ 256։

Ըստ Ս. Օրբելյանի հայտնած տեղեկությունների, Սյունյաց նահանգի Զորք գավառում գտնվող Վահանավանքում XI դ. վերջերին շինարարական նշանակալից աշխատանքներ է կատարել Շահանդուխտ թագուհին։ XI դ. երկրորդ կեսին, Սյունյաց Գրիգոր թագավորի ժամանակ (1044—1084), Վահանավանքը վերակառուցում են Շահանդուխտ թագուհին, նրա քույր Կայտան և եղբայր Սենեքերիմը (հետագայում Սյունյաց թագավոր)։ Նրանք կառուցում են ս. Աստվածածին եկեղեցին և հարակից շենքեր, որոնց շինարարությունն ավարտվում է 1086 թ.։ «...յաւուրս Գրիգորի՝ թագաւորի Բաղաց, ի Շահանդխտոյ թագուհւոյն և ի Կայտայլ և ի Սենեքերիմայ... բաղում և գեղեցիկ շինուածովք առաւել գեղեցկացուցին զվանսն Վահանու՝ կանգնեալ կամարս մեծամեծս, և ի վերայ՝ եկեղեցիս և սրահս բազմասիւնս բարձրաբերձ, հովանի և խրախարան իշխանացն...»[50]։

Հիշատակված այս շինություններից քչերն են մնացել, այն էլ կիսավեր վիճակում։ Կիսավեր վիճակում է նաև Շահանդուխտ թագուհու կառուցած ս. Աստվածածին եկեղեցին, որի ներսի պատին պահպանվել է հետևյալ արձանագրությունը. «Ի: Շէ: թվականիս ես՝ Շահանդուխտ, դուստր Սեւադաի Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւորի որդո Աշոտկա, վասն ոչ գոլո մեր ի միասին ժառանգ ըստ մարմնո, ես և քոյրս իմ Կատայս շինեցաք զսր Աածածինս փոխարեն գթոց նորա...»[51]։ Վահանավանքի եկեղեցու բակում ընկած գեղաքանդակ խաչքարի շրջանակներին փորագրված է. «Քս. ԱԾ ողորմեայ ի քո ի միւս անգամ գալըստեան... մաւր Շահանդխտո... եւ Կատաին»[52]։

Մատենագրական ստույգ տեղեկություններից հայտնի է, որ Մխիթար Գոշը 1191 թ. ձեռնարկում և 1196 թ. ավարտում է Նոր Գետիկի Մարիամ Աստվածածին հռչակավոր կառույցի շինարարությունը։ Այնտեղ կառուցվում են նաև ս. Կարապետի և Գրիգոր Լուսավորչի եկեղեցիները, գավիթ, դպրոց, գրչատուն և կենցաղային օժանդակ շենքեր[53]։ Վանքի համալիրի կառուցմանը մեծապես օժանդակում են Զաքարե և Իվանե Զաքարյանները, Հաթերքի տեր Վախթանգ Խաչենցին, Քուրդ իշխանի որդիներ Դավիթն ու Սադունը և նրանց քույր, Վախթանգ Խաչենցու կին Արզու Խաթունը։ Վերջինս իր աղջիկների օգնությամբ գործում է նաև մի վարագույր և եկեղեցու օծման հանդիսությունների ժամանակ (1197 թ.) նվիրում վանքին[54]։ Պատմագրի ասելով՝ վարագույրը տեսնողները հիանում էին նրանով և «փառք տալիս աստծուն», որ կանանց օժտել է նկարելու այդչափ մեծ կարողությամբ։ «Սա բազում ինչ օժանդակ եղև, արար և վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց..., գործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք տնօրինականօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն։ Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ,

50 Ստեփաննոս Օրբելյան, էջ 241։

51 «Դիվան», պ. II, էջ 138։

52 Նույն տեղում, էջ 138։

53 Կիրակոս Գանձակեցի, էջ 211—217։

54 «Դիվան հայ վիմագրության», պ. VII, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հոմ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 65։

որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան...»[55]։

Հետագայում Արզու խաթունը վարագույրներ է գործում և նվիրում նաև Հաղբատի, Մակարավանքի և Դագի վանքերին[56]։

Աստվածածին եկեղեցու շինության արձանագրության մեջ Արզու խաթունի ունեցած մասնակցության մասին, ի միջի այլոց, ասված է. «Ի ՈԽՋ [ԹՈՒՆ] (1197) ...սկսեալ եկեղեցիս սբ ի Նորս Գետիկ և կատարի յամս Ե... ձեռնատուութ[եամ]ը բարեպ/աշտ իշխանի Վախտանգա և նորին զուգակցի՝ Արզու խ/աթունի...»[57]։

Պատմական Արցախի նշանավոր համալիրներից է Դադի վանքը կամ Խութավանքը[58], որտեղ XIII դ. սկզբին շինարարական մեծ աշխատանք է կատարել Վախթանգ իշխանի կինը՝ վերոհիշյալ Արզու խաթունը։ 1214 թ. նա կառուցում է կենտրոնագմբեթ եկեղեցի և սյունազարդ սրահով գավիթ։ Հետագայում այնտեղ ավելացել են նոր համալիրներ[59]։

Մոնղոլական արշավանքների տարիներին հայ իշխաններից ոմանք կարողացան ծավալել շինարարական նշանակալից աշխատանքներ։ Հիշատակության արժանի են Խաչենի ավագ իշխան Հասան Ջալալը (Զաքարեի և Իվանեի քրոջ որդին էր) և նրա ընթերցասեր կինը՝ իշխանուհի Մամքան։ Կ. Գանձակեցու վկայությամբ, 1233 թ. նրանք ավարտում են Գանձասարի նշանավոր եկեղեցու և նրա հրաշալի գավթի շինարարությունը[60]։

Մատենագրական տեղեկություններից և վիմագիր արձանագրություններից պարզվում է, որ միջնադարի հայ կանայք իրենց լուման ներդրել են նաև քաղաքացիական բնույթի շինարարության մեջ։ Նրանք կառուցել են տվել գեղեցիկ ապարանքներ, կամուրջներ, հիմնել են մի շարք գյուղեր։

Զաքարե և Իվանե Զաքարյանների քույրերից Վանենին, որն ամուսնացած էր Կյուրիկե II թագավորի որդի Աբաս I-ի (1170—1176) հետ, ամուսնու մահից հետո՝ 1192 թ., Դեբեդ գետի վրա կառուցում է Սանահնի նշանավոր կամուրջը՝ ի հիշատակ անժամանակ մահացած իր ամուսնու[61]։ Սանահնի կամուրջի մոտ, խաչքարի վրա, այդ կառույցի մասին արձանագրված է. «...Ես՝ Վանենի, դուստր իշխանաց իշխանն Սարգսի, որդո Զաքարէի, կին Աբասա թագաւորի, որ կիսաւրե վախճանեալ խաւարեցոյց զմեզ, շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ մխիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց։ Յիշեցէք ի Քս Յս»[62]։ Այդ կամուրջն այժմ էլ կա և մասնագետների կարծիքով ճարտարապետական մի բարդ կառույց է։

Տիկին Վանենին կառուցել է նաև պարիսպ՝ Հովհաննավանքի շուրջը։

Համաձայն Սյունյաց նահանգի պատմագրի տեղեկությունների՝ Վայոց ձորի Գնդեվանքին նվիրած Գնդեվանս գյուղը 936 թ. նույն ինքը՝ Սյունյաց

---

55 Կիրակոս Գանձակեցի, էջ 215։

56 Նույն տեղում, էջ 216։

57 «Դիվան», պ. VII, էջ 65։

58 Նույն տեղում, էջ 89։

59 Բ. Ուլուբաբյան, Դադի կամ Խութա վանք, «Էջմիածին», 1971, № 6, էջ 62—72։

60 Նույն տեղում, տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 270։

61 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 185։

62 Նույն տեղում։

իշխանուհի Սոփիան էր հիմնադրել[63], իսկ Հարանդ գավառի Տեղ գյուղը՝ Թագուհի Շահանդուխտը։ Սյունյաց առաջին թագավոր Սմբատի մահից հետո Շահանդուխտն այդ գյուղը 998 թ. նվիրեց Տաթևի վանքին[64]։ 1107 թ. Սյունյաց նահանգի Վերին Շեն գյուղում (ավերակները գտնվում են Գորիսի մոտ) Մխիթարը և նրա կին Ջանազանը կառուցել են մի գեղեցիկ ապարանք և ապարանքի մուտքի կամարի վրա թողել հետևյալ արձանագրությունը. «Կամաւն այ ես Պինեաթի որդի Մխիթարս եւ կենակիցն իմ Ջանազանն շինեւ տուինք զայս ամտրաթս ի վայելումն որդոյ մերոյ Ղարախանին։ Թվին : ՈԾէ:»[65]։

Պահպանված վիմական արձանագրությունները վկայում են, որ XII դ. վերջերին Անիի Սմբատյան պարիսպների վերականգնմանը և աշտարակների շինությանը մասնակցել են քաղաքի բնակիչները, այդ թվում և կանայք՝ Մամախաթունը, Շանուշը, Մամշահը։ Հանձն առնելով առանձին պարսպամասերի վերաշինությունը, նրանք իրավունք են ստացել այդ մասին թողնել համապատասխան արձանագրություն[66]։

Այսպիսով, մատենագրական վերոհիշյալ փաստերը և վիմագիր արձանագրություններն աներկրա վկայում են, որ միջնադարի հայ կանայք իրենց համեստ լուման են ներդրել նաև ճարտարապետական կառույցների ստեղծման գործում։ Նրանք եկեղեցիներն ու վանքերը հիմնականում կառուցել են հայրենասիրական նկատառումներով՝ քաջ գիտակցելով դրանց դերը հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման բնագավառում։ Նրանց կառուցած վանքերից շատերը հետագայում դարձել են ուսումնակրթական և գրչության արվեստի նշանավոր կենտրոններ և նպաստել հայկական մշակույթի զարգացմանը։

РОЛЬ АРМЯНСКИХ ЖЕНЩИН В СТРОИТЕЛЬСТВЕ СРЕДНЕВЕКОВЫХ АРХИТЕКТУРНЫХ ПАМЯТНИКОВ (IX—XIII вв.)

РИМА БОЯДЖЯН

Резюме

В IX—XIII вв. армянская архитектура переживала период значительного расцвета. По свидетельству армянских историков Ст. Орбеляна, Ст. Таронеци, К. Гандзакеци, С. Анеци и др., а также по достоверным данным лапидарных надписей наряду с мужчинами в строительстве архитектурных памятников Армении значительную роль сыграли и армянские женщины. Заметно их участие в воздвижении таких известных памятников архитектуры, как Татевский, Гандзасарский, Нор Гетикский, Севанский, Ахпат-Санаинский монастырские комплексы, а также многих других сооружений в древнеармянских областях — Арцах, Сюник, Содк, Гегаркуник, Вайоц-дзор и др.

63 Ստեփաննոս Օրբելյան, էջ 261։
64 Նույն տեղում, էջ 291—292, «Դիվան», պ. II, էջ 66։
65 «Դիվան», պ. II, էջ 77։
66 И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 114.